



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 հունվարի 2018 թվական թիվ 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԾԱԽՍԵՐՈՒՄ ՎԵՐԱԲԱԾԵՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի ա ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման 4-րդ կետը

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի ենթակայության կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների ծախսերում կատարել վերաբաշխումներ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար, գլխավոր ֆինանսախոս Ա.Գևորգյանին մարզպետարանի ենթակայության կրթական ոլորտի պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ կնքել սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետի տեղակալ Կ.Ադամյանի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ



25 հունվարի 2018թ.
ք. Իջևան